

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՌՈՊՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻՆ ԾՆՆԴՅԱՆ
ՌԻԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԻԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՌՈՊՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ**

Գոհությամբ ենք մատուցում Աստծուն, որ Իր ամենառատ շնորհի ներքոյ ծաղկուն է պահպանում մեր մշակոյթի անդաստանը, որի վաստակաշատ մշակիդ, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյնով յղում ենք Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները:

Ուրախութիւն է Հայրապետիս համար գնահատանքի խօսք ուղղել Ձեզ: Ահաւսիկ, աւելի քան կէս դար Դուք ծառայում էք մեր ժողովրդին՝ բերելով Ձեր հոգու ողջ նուիրումը, աստուածապարգէս ազնիւ ձիրքերը, եռանդն ու նախանձախնդրութիւնը՝ շարունակելով ու բարձր պահելով գրական-մշակութային այն հզօր ու պայծառ ասանդները, որոնք դարերով խնամուել ու պահպանուել են պոլսահայ համայնքում:

Ձեր գրական հարուստ վաստակով, մեծարգոյ պրն Հատտեճեան, ճանաչուած էք ինչպէս Սփիւռքի մեր գաղթօջախներում, այնպէս եւ՝ Մայր Հայրենիքում: Մեր ժողովուրդը մեծարում է Ձեզ որպէս մեծ գրողի եւ հայ գրականութեան երախտարժան գործչի: Ինքնուրոյն դիմագիծ, մտածողութիւն եւ ճաշակ կրող բազմաժանր արգասիքները Ձեր բեղուն գրչի մնայուն արժէքներն են մեր գրականութեան մէջ: Բնատուր տաղանդով, ստեղծագործելու ինքնաբոլիս ապրումով ծնունդ առած Ձեր գործերի նպատակն է կեանքի հաստատումը, մարդու բարձրացումը դէպի կատարեալը, օրինեալը, արժանին, դէպի ճշմարիտ մարդկայինն ու աստուածայինը: Մեր Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ այս հաւատամքը Ձեր շնորհակնիք խօսքի զօրութեամբ փոխանցուում է նաեւ ընթերցողներին: Դուք, քաջածանօթ հայ եւ համաշխարհային գրականութեանը, Ձեր գեղարուեստական ստեղծագործութիւններով, թարգմանութիւններով ու գրախօսականներով ջանացիք, որ աշխարհասփիւռ մեր ժողովրդի հոգում արթուն մնայ սերը հայրենի ժառանգութեան հանդէպ, արուեստի ու մշակոյթի հանդէպ:

Պոլսահայ համայնքային կեանքին, հանուր ազգային մեր կեանքին Ձեր գործուն մասնակցութեան ակնառու դրսեւորումն են նաեւ «Մարմարա» օրաթերթի առաքելութեանը բերած Ձեր ծառայութիւնները՝ որպէս արժանաւոր խմբագիր: Ձեր խմբագ-

րականները, յօդուածաշարերը, գրական նշմարները իրենց արժեքաւորութեամբ յաճախ վերահրատարակուել են Սփիւռքի պարբերականներում: Ներկայիս ազգային-մշակութային մեր կեանքին իր նպաստն է բերում նաև Ձեր հիմնած տպարանը՝ հրատարակելով գրքեր, պարբերականներ, յուշամատեններ, որոնց շարքում՝ Կոստանդնուպոլսի հայոց երջանկայիշատակ Շնորհք Պատրիարքի պայծառ յիշատակին նուիրուած Ձեր հեղինակութեամբ կազմուած յուշամատենը:

Աղօթում ենք առ Աստուած, որ պահպանի Ձեզ քաջառողջ եւ պարգևի կեանքի երկար ու բերկրալի օրեր՝ շարունակելու Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին, հայ գրականութեանն ու մշակոյթին: Թող Տէրը նոր յաջողութիւններ պարգևի ստեղծագործական Ձեր ջանքերին, Ձեր ծրագրերին ու բոլոր բարի գործերին:

Շնորհք ընդ Ձեզ եւ օրհնութիւն Աստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի շնորհաբաշխ Հոգւոյն Սրբոյ՝ կենարարէ եւ առատաձաւալ պարգեւատուէ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 15-ը Մարտի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 717